Հաստատված է

«Ուրարտու» համալսարանի գիտական խորհրդի

25 օգոստոս 2014 թ. նիստում

Ռեկտոր՝ Ս.Ա. Սեդրակյան

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ և ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ <<ՈՒՐԱՐՏՈՒ>> ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳ

Կրթությունը և կրթական համագործակցությունը բոլորի կողմից կարևորվում է որպես կայուն, խաղաղ և ժողովրդավարական հասարակությունների զարգացման և ամրապնդման գործոն:

<<Գիտելիք Եվրոպա>> հասկացությունն այժմ արդեն լայնորեն ճանաչված է որպես սոցիալական և մարդկային զարգացման անփոխարինելի գործոն, ինչպես նաև եվրոպական հասարակության համախմբման և հարստացման անբաժանելի բաղադրիչ, որն ի վիճակի է քաղաքացիներին տալ անհրաժեշտ կարողություններ՝ դիմակայելու նոր հազարամյակի մարտահրավերներին՝ միաժամանակ գիտակցելով, որ կիսում են նույն արժեքները և պատկանում նույն սոցիալ – մշակութային տարածքին:

Գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի <<Ուրարտու>> համալսարանում 2008 թվականին ստեղծվել է նոր կառույց՝ Կրթական բարեփոխումների կենտրոն, որի ձևավորման անհրաժեշտությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության համակարգում իրականացվող բարեփոխումներով, որոնք միտված են եվրոպական բարձրագույն կրթության տարածքին հանրապետության ինտեգրման ռազմավարական խնդրի իրականացմանը: Դրա համար ԲՈՒՀ-երում պետք է ներդրվեն եվրոպական համընդհանուր չափանիշներին համապատասխանող ուսուցման առաջադեմ մեխանիզմներ և տեխնոլոգիաներ, ինչն, իր հերթին ենթադրում է ուսումնական գործընթացի կազմակերպման կառուցվածքային վերափոխում: Հռչակագրի համաձայն եվրոպական բարձրագույն կրթության տարածքի հիմնական ուղենիշը եվրոպական բարձրագույն կրթության համակարգերի ճարտարապետության համապատասխանեցում և միասնականացումն է՝ նպատակ ունենալով առավել դյուրին դարձնել ուսանողների շարժունակությունը եվրոպական ընդհանուր տարածքում, բարելավելու աշխատաշուկայում նրանց մրցակցային դիրքերը, բարձրացնելու եվրոպական բարձրագույն կրթության մրցունակությունն ու գրավչությունն ամբողջ աշխարհում:

Բոլոնիայի գործընթացի նպատակը եվրոպական բարձրագույն կրթության տարածքի ստեղծումն է, որի շրջանակներում ուսանողները կարող են հեշտությամբ տեղաշարժվել՝ ունենալով

իրենց որակավորումների ճանաչման երաշխիքներ: Բոլոնիայի հռչակագիրը եվրոպական բարձրագույն կրթության տարածքի ստեղծմանն ուղղված բարեփոխումների ծրագիր է, որն առավել հայտնի է որպես Բոլոնիայի գործընթաց: Վերջինիս հիմնական ուղենիշն է մոտեցնել բարձրագույն կրթությունը Եվրոպայում մի թափանցիկ, միասնական փոխճանաչված համակարգի, որն ազգային բազմազան համակարգերը կընդգրկի կազմակերպչական ընդհանուր շրջանակի մեջ:
Հռչակագրում ձևակերպված են Բոլոնիայի գործընթացի հետևյալ հիմնական խնդիրները՝

- Ընդունել դյուրընթեռնելի և համեմատելի կրթական աստիճանների համակարգ, այդ թվում, Դիպլոմի միասնական հավելվածի ներդրման միջոցով, Եվրոպայի քաղաքացիների աշխատանքի տեղավորման հնարավորությունների ապահովման և եվրոպական բարձրագույն կրթության համակարգի միջազգային մրցունակության բարձրացման համար:
- Ընդունել մի համակարգ, որն էապես հիմնված լինի երկու գլխավոր փուլերի վրա: Երկրորդ փուլը սկսելու համար անհրաժեշտ է հաջողությամբ ավարտել առաջինը, որը տևում է առնվազն երեք տարի:
  Առաջին փուլից հետո շնորհված աստիճանն իր որակավորման մակարդակով պետք է համապատասխանի եվրոպական աշխատանքային շուկայի պահանջարկներին: Երկրորդ փուլն ապահովում է մագիստրոսի և կամ դոկտորի աստիճան, ինչպես դա ընդունված է շատ եվրոպական երկրներում:
- Հիմնադրել կրեդիտային համակարգ, ինչպիսին է ECTS-ը, որպես ուսանողների մեծամասշտաբ շարժունությանը խթանող միջոց: Կրեդիտներ կարելի է ձեռք բերել նաև բարձրագույն ուսումնական հաստատություններից դուրս, եթե այդ կրեդիտները ճանաչված են ընդունող շահագրգիռ համալսարանների կողմից:
- Նպաստել շարժունությանը՝ հաղթահարելով ազատ տեղաշարժման արգելքները, հատուկ ուշադրություն դարձնելով հետևյալ հարցերին.
  ուսանողների համար մատչելի դարձնել ուսուցման և վերապատրաստման, ինչպես նաև հարակից ծառայություններ ստանալու հնարավորությունները,
  դասախոսների, հետազոտողների և վարչական աշխատակազմի համար հաշվի առնել եվրոպական տարածաշրջանում ուսուցման, հետազոտական աշխատանքների և վերապատրաստման ժամանակահատվածը՝ չանտեսելով օրենքով սահմանված նրանց իրավունքները:
- Նպաստել Եվրոպական համագործակցությանը կրթության որակի ապահովման ասպարեզում՝ մշակելով կրթության համեմատելիության չափանիշներ և մեթոդներ:
- Նպաստել բարձրագույն կրթության եվրոպական ուղղվածությանը, մասնավորապես, ուսումնական պլանների մշակման, միջհամալսարանական համագործակցության, շարժունության սխեմաների, համատեղ ուսումնական, գիտահետազոտական և վերապատրաստման ծրագրերի ուղղությամբ:

Հայաստանի Հանրապետությունում իրականացվող բարեփոխումների նպատակն է կատարելագործել ուսումնական գործընթացի հիմնական բաղադրիչները, բարձրացնել ուսանողների մասնագիտական պատրաստվածության մակարդակը, ԲՈՒՀ-ում կազմակերպվող ուսումնական գործընթացի արդյունավետությունը, ինչպես նաև նախադրյալներ ստեղծել աշխատաշուկայում ԲՈՒՀ-ի շրջանավարտների մրցունակության ապահովման և բարձրացման համար: Նշված խնդիրների իրականացումը հնարավոր է ուսումնական գործընթացի կառավարման նոր մոտեցումների և

մեխանիզմների ներդրման պարագայում: Բարձրագույն կրթության եվրոպական միասնական տարածքին Հայաստանի ինտեգրումը ենթադրում է երկաստիճան կրթական մոդելի ներմուծում, կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպում, ուսանողների ազատ շարժունակության ապահովում, ինչպես նաև որակի երաշխավորման նոր համակարգի ստեղծում: Նշենք, որ ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների մի մասը, այդ թվում՝ Գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի «Ուրարտու» համալսարանը, արդեն ձեռնամուխ է եղել երկաստիճան կրթական մոդելի ներդրմանը, քանի որ հիշյալ պահանջն ամրագրված է նաև «Կրթության մասին» ՀՀ օրենքում: Ինչ վերաբերում է կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպմանը, ապա այն իրենից ներկայացնում է ուսումնական գործընթացի կազմակերպման, ուսումնառության արդյունքների ակադեմիական կրեդիտների միջոցով հաշվառման, կուտակման և փոխանցման համակարգ, որում համապատասխան որակավորումը շնորհվում է ուսումնական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ քանակի կուտակումից հետո: Ուսումնական գործընթացը կրեդիտային համակարգով կազմակերպելիս հստակ սահմանվում են որակավորման շնորհման համար անհրաժեշտ կրեդիտների նվազագույն քանակը, կրեդիտները ձևավորող դասընթացների և այլ բաղադրիչների բովանդակային կազմը՝ ծրագրի պարտադիր և ընտրովի առարկայացանկի տեսքով, դասընթացներին հատկացված կրեդիտները և այլն: Կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպումը հանդես է գալիս որպես կրթական համակարգերի և շնորհվող որակավորումների համադրելիության նախապայման և դրանց միասնականացումն ապահովող կարևորագույն գործոն: Կրեդիտային համակարգն ուսուցման ոչ գծային համակարգ է, որն ապահովում է ուսանողի ուսուցման գործընթացի հաջորդականության անհատական պլանավորման հնարավորությունը: Կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպումը նպաստում է.

- դասընթացների բովանդակության և մեթոդական ապահովման արդյունավետության բարձրացմանը,
- ուսումնական գործընթացի կազմակերպման աշխատանքների արդյունավետության բարձրացմանը,
- ուսումնական գործընթացի ազատականացմանը՝ ավելացնելով ուսանողի ինքնուրույն աշխատանքի տեսակարար կշիռը,
- ուսուցման ոչ գծային ժամանակակից մեթոդների ներդրմանը,
- ուսումնական ծրագրերի յուրացման որակի գնահատման կատարելագործմանը,
- համաեվրոպական կրթական համակարգին ԲՈՒՀ-ի ինտեգրմանը,
- ուսանողի կողմից ԲՈՒՀ-ում ձեռք բերված կրեդիտների ճանաչմանը համաեվրոպական ողջ տարածքում,
- ԲՈՒՀ-ի և նրա շրջանավարտների մրցունակության բարձրացմանը,
- ուսանողների արտալսարանային պարապմունքների արդյունավետության բարձրացմանը,
- ուսանողների ստեղծագործական աշխատանքի և հետազոտական գործունեության խրախուսմանը,
- հայաստանյան և արտասահմանյան ԲՈՒՀ-երի միջև ուսանողական շարժունակության ապահովման համար իրավական հիմքերի ստեղծմանը:

Հաստատված կրթական չափորոշիչների նոր հենքի վրա «Ուրարտու» համալսարանում կրեդիտային համակարգի ներդրումը ենթադրում է ուսումնական պլանների արմատական

վերակառուցում՝ ուղենիշ ունենալով դրանց մոդուլացումը, ուսանողի ամբողջ ուսումնական բեռնվածության արտահայտումը կրեդիտային արժեքներով՝ պարտադիր և ընտրովի դասընթացների և մոդուլների ցանկով, դրանց ամրագրված կրեդիտների չափաբաժիններով: Կրեդիտների համադրելիության ապահովման նպատակով խնդիր է դրվում նորացված ուսումնական ծրագրերն ու դրանց բովանդակությունը համապատասխանեցնել եվրոպական չափանիշներին, մասնավորապես՝ կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգի պահանջներին: (European Credit Transfer System):

Կրթական բարեփոխումների կենտրոնի գործունեությունը նպատակաուղղված է հենց կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպմանը, ներդրմանն ու գործարկմանը: Բարեփոխումների կենտրոնի կողմից մշակվել է կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման հետ կապված հիմնական կանոնակարգերը, այդ թվում՝ կրեդիտային համակարգով ուսանողների ուսուցման միջանկյալ գնահատման համակարգի ընդհանուր կարգը, առանձին ամբիոնների, պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսանողության համար կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման համառոտագրերը, ակադեմիական խորհրդատուների և գրանցումների գրասենյակի գործունեությունը սահմանող կարգը, ուսանողների գիտելիքների գնահատման նոր համակարգը, այդ թվում՝ վարկանիշային համակարգի ներդրման կարգը, ուսանողի անհատական և ինքնուրույն աշխատանքներին ներկայացվող պահանջների կանոնակարգը և այլ փաստաթղթեր: Պետք է նշել, որ հիշյալ կարգերի մշակման համար հիմք է հանդիսանում ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատանքային խմբի կողմից մշակված ԲՈՒՀ-ում ուսումնական գործընթացի կրեդիտային համակարգով կազմակերպման օրինակելի կարգը, որի աշխատանքներին մասնակցում է նաև «Ուրարտու» համալսարանը, հանձինս՝ Կրթական բարեփոխումների կենտրոնի տնօրեն Ռ. Կոստանյանի:

Բացի այդ, կենտրոնը սեմինար-խորհրդակցություններ է կազմակերպում ինչպես պրոֆեսորադասախոսական անձնակազմի, այնպես էլ՝ ուսանողության համար՝ լուսաբանելու և ներկայացնելու կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման հիմնադրույթները:

Գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի «Ուրարտու» համալսարանի գիտական խորհուրդը, ելնելով «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի հոդվածի 5-րդ կետի (2005թ.) և ՀՀ կառավարության թիվ 2307 որոշման թիվ 2-րդ կետի պահանջներից (2005թ.) անդրադարձել է բուհում կրեդիտային համակարգի ներդրմանը՝ նիստի հետևյալ ժամանակացույցով.

- 2008թ. - «Ուրարտու» համալսարանում կրթական գործընթացը կրեդիտային համակարգով կազմակերպելու փորձաշրջանային փուլ:
- 2009թ. – Կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպում (առկա, հեռակա ուսուցմամբ):

1. Ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգի էությունը

Գիտելիքների գնահատման կրեդիտային համակարգը երկու հիմնական նպատակ է հետապնդում:

1. Ուսուցման արդյունքների հաշվարկում և ուսումնառության արդյունավետության գնահատում:
2. Միասնական կրթական համակարգում ուսուցման արդյունքների համեմատական դաշտի ապահովում:
3. Ուսանողը վաստակում է սահմանված կրեդիտը համապատասխան դասընթացը կամ ուսումնական մոդուլը (լսարանային և արտալսարանային լրիվ ուսումնական ծանրաբեռնվածությամբ) հաջողությամբ յուրացնելու և հանձնելու դեպքում:

1 կրեդիտ = 30 ակադեմիական ժամ

2. Կրեդիտային համակարգի հիմնական դրույթները

Համաեվրոպական ECTS կրեդիտային համակարգի հետևյալ սահմանումները և դրույթները ընդունված են Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում և չեն կարող ձևափոխվել ԲՈՒՀ-երի կողմից:

1. <u>Կարողությունը</u> գիտելիքի, ընկալման, ունակությունների և հմտությունների դինամիկ համակցություն է, որի ձևավորումը կրթական ծրագրի հիմնական նպատակն է: Այն կարող է լինել մասնագիտական (առանձնահատուկ ուսման տվյալ բնագավառի համար) և ընդհանուր (անկախ բնագավառից):
2. <u>Կրթական արդյունքը</u> այն է, ինչ պետք է գիտենա, հասկանա և կարողանա անել ուսանողը ուսումնառության ավարտին: Կրթական արդյունքը զուգակցվում է համապատասխան գնահատման չափանիշով, որը հանարավորություն է տալիս դատել դասընթացով սահմանված կրթական արդյունքի ձեռքբերման մասին: Կրթական արդյունքը և գնահատման չափանիշը միասին սահմանում են կրեդիտի շնորհման պահանջները:
3. <u>Կրթական (ուսումնական) մոդուլը</u> ուսումնական ծրագրի ամենափոքր, համեմատաբար ինքնուրույն մասն է, որի համար կրեդիտ է տրվում: Կրթական մոդուլի ուսուցման տևողությունը 1 կիսամյակ է՝ դրանով սահմանված կրթական արդյունքների պարտադիր գնահատմամբ: Կրթական մոդուլին հատկացված կրեդիտները շնորհվում են ամբողջությամբ, այլ ոչ թե առանձին մասերով:
4. <u>ECTS կրեդիտը</u> դասընթացը (կրթական մոդուլը) ավարտելու և դրա ելքային արդյունքները ձեռք բերելու համար ուսանողից պահանջվող ժամաքանակով արտահայտված ուսումնական բեռնվածքի չափման պայմանական միավոր է, որը տրվում է ուսանողին նախանշված կրթական արդյունքների դրական գնահատումից հետո:
5. <u>ECTS կրեդիտի կարևորագույն չափանիշներն են.</u>

- ECTS կրեդիտով սահմանվող ուսումնական բեռնվածքը ներառում է ուսանողի լսարանային, արտալսարանային և ինքնուրույն իրականացվող բոլոր տեսակի ուսումնական աշխատանքները, այդ թվում՝ մասնակցությունը դասախոսություններին, սեմինար և գործնական պարապմունքներին, լաբորատոր աշխատանքներին և պրակտիկաներին, կուրսային և ավարտական աշխատանքների կատարումը, քննություններին նախապատրաստվելը և հանձնելը, անհատական հետազոտությունը և այլն,
- կրեդիտը չափում է միայն ուսանողի ուսումնական բեռնվածքը և չի գնահատում դասընթացի կամ կրթական մոդուլի բարդության աստիճանը, մակարդակը կրթական ծրագրում կամ ուսանողի կողմից դրա յուրացման որակը (գնահատականը),
- կրեդիտը ուսանողին տրվում է միայն կրթական մոդուլով նախանշված կրթական արդյունքի գնահատման շեմային չափանիշները բավարարելուց հետո: Ուսանողը վաստակում է կրթական մոդուլին հատկացված կրեդիտների լրիվ քանակը՝ քննական արդյունքների (գնահատականների կամ թվանշանների) հետ միասին,
- ECTS կրեդիտը չի չափում դասախոսի ուսումնական գործունեության (դասավանդման) աշխատածավալը: Այն չափում է ուսանողի ուսումնական աշխատանքի (ուսումնառության) ծավալը,
- կրեդիտը չի փոխարինում թվանշաններով ուսանողի գնահատմանը, իսկ ուսանողի վաստակած կրեդիտների քանակը չի որոշվում նրա ստացած թվանշաններով,
- կրեդիտը չի չափում ուսանողի ստացած գիտելիքի որակը, այն չափվում է գնահատականներով: Կրեդիտային և գնահատման համակարգերի միջև փոխադարձ ներգործության որևէ կապ չկա:

6. <u>Կրեդիտային համակարգը</u> ուսումնական գործընթացի կազմակերպման, ակադեմիական կրեդիտների միջոցով ուսումնառության արդյունքների հաշվառման (արժևորման), կուտակման և փոխանցման համակարգ է, որտեղ համապատասխան որակավորման աստիճանը շնորհվում է կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ բովանդակության և քանակի ձեռքբերումից հետո:
7. <u>Կրեդիտների փոխանցման և կուտակման ECTS համակարգը</u> միասնական համաեվրոպական կրեդիտային համակարգ է, որտեղ ուսանողի լրիվ ուսումնական բեռնվածքը 1 ուստարում գնահատվում է 60 ECTS կրեդիտ: Այն նախատեսված է Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում (ԵԲԿՏ) ուսանողների ձեռք բերած կրթական արդյունքների արժևորման, պաշտոնական ճանաչման և բուհից բուհ տեղափոխումը դյուրացնելու համար:
8. <u>Կրեդիտների փոխանցման և կուտակման ECTS համակարգի հատկանիշներն են.</u>
    - կիսամյակը, ուսումնական տարին կամ ուսումնառության լրիվ ծրագիրը հաջողությամբ ավարտելու համար ուսանողը պետք է վաստակի կրթական ծրագրող սահմանված կրեդիտների անհրաժեշտ քանակը,
    - կրեդիտներ հատկացվում են կրթական ծրագրի՝ գնահատման ենթակա բոլոր բաղկացուցիչներին՝ դասընթացներին, կրթական մոդուլներին, պրակտիկաներին, կուրսային և ավարտական աշխատանքներին և այլն:
    - կրթական ծրագիրը և դրա առանձին բաղկացուցիչները բնութագրող բոլոր պայմանները՝ ծրագրի նպատակը և ավարտական պահանջները, դասընթացների

համառոտագրերը, նախապայմանները և հատկացված կրեդիտները, դասավանդման մեթոդները պետք է նախապես հրապարակվեն, տպագրվեն կամ տեղադրվեն բուհի կայքում),

- հավատարմագրված բուհերում և/կամ կրթական ծրագրերում ստացված կրեդիտները սկզբունքորեն փոխանցելի են բուհերի և կրթական ծրագրերի միջև, եթե դրանց կրթական արդյունքները համարժեք են,
- եթե կրեդիտների փոխանցման գործընթացում ներգրավված բուհերը այդ մասին կնքել են ԲՈՒՀ-ի պահանջներին համապատասխանող եռակողմ (ուսանող, առաքող և ընդունող բուհեր) կրթական համաձայնագիր, ապա այն ունի իրավական ուժ:

3. Ուսանողի ծանրաբեռնվածության հաշվարկը կրեդիտ-ժամերով

Ուսանողի առավելագույն օրական ուսումնառության ծանրաբեռնվածությունը սահմանված է 9 ժամ, որից առավելագույն լսարանային ժամերը՝ 6 ժամ: Բացի այդ, ուսանողի առավելագույն շաբաթական ուսումնառությունը սահմանված է 5 օր, իսկ տարեկան՝ 40 ուսումնական շաբաթ (ներառյալ քննաշրջանները):
Յուրաքանչյուր ուսումնական տարվան բաժին ընկնող ուսումնառության առավելագույն ծանրաբեռնվածությունը ներկայացվում է 60 կրեդիտով և հետևյալ հաշվարկով՝

Հավելված 1.

Տարվա շաբաթների թիվը	52
Ուսումնական շաբաթները = տարվա շաբաթների թիվ – արձակուրդային = 52-2 (ձմեռային) -10 (ամառային)	40
Կիսամյակային ուսումնական շաբաթներ	=20
Ուսանողի օրական աշխատաժամանակը	=9ժամ
Ուսանողի շաբաթական ծանրաբեռնվածությունը 9 ժամ x 5 օր	=45ժամ
Մեկ ուսումնական շաբաթվան բաժին ընկնող կրեդիտը = 45/30	=1.5կրեդիտ
Մեկ կիսամյակին բաժին ընկնող կրեդիտը = 20 շաբաթ x 1.5	=30կրեդիտ
Մեկ ուսումնական տարվան բաժին ընկնող առավելագույն կրեդիտը = 2 կիսամյակ x 30 կրեդիտ	=60կրեդիտ

Բակալավրի կրթական ծրագրում ընդգրկված լինելու և բավարար առաջընթաց ցուցաբերելու համար ուսանողը յուրաքանչյուր կիսամյակում պետք է ունենա 30 կրեդիտ ուսումնական ծանրաբեռնվածություն (ներառյալ նաև արտալսարանային աշխատանքը):

Ուսանողի ընդհանուր ծանրաբեռնվածություն = լսարանային ժամեր + արտալսարանային ժամեր